



Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06 Փետրվարի 2018թ.

ք. Գյումրի

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ դատավոր
քարտուղարությամբ

Ս. Գեղորգյանի
Փ. Թորոյանի

Դոնրաց դատական նիստում, քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի /հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան, ՀՎՀՀ՝ 00091693 <<Կոնվերսանկ>> ՓԲԸ, հ/հ 1930005627050400, պետ գրանցման վկայական թիվ 03 Ա 069690/ ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի /հասցե՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16/՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Դատաքննությամբ և գործի նյութերի ուսումնասիրությամբ դատարանը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմություն

Քաղաքացիական գործով հայցվոր՝ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ը 15.03.2017թ-ին գումարի բռնագանձման պահանջով հայց է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի:

Հայցադիմումը 16.03.2017 թվականին ընդունվել է վարույթ:

Հայցվոր՝ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Մանուկյանը 24.05.2017 թվականին լիազորել է տնօրենի խորհրդական Սերգեյ Մկրտչյանին /անձնագիր՝ AG0653203/ դատարանում հանդես գալ որպես ներկայացուցիչ:

Հայցվոր՝ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը 19.01.2018թ. միջնորդություն է ներկայացրել Դատարան, որով հայտնել է, որ հրաժարվում է ներկայացված հայցից եւ խնդրել է քաղաքացիական գործի վարույթը կարճել:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվոր՝ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը 19.01.2018թ. միջնորդություն է ներկայացրել Դատարան, որով հայտնել է, որ ՀՀ Կառավարության 07.12.2017 թվականի թիվ 1585-Ն <<ՀՀ պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2011-2016 թվականներին հատկացված սերմացուների դիմաց ձեւավորված պարտքերի ներման մասին>> որոշման համաձայն ՀՀ Շիրակի մարզին հատկացված սերմացուի դիմաց պարտքը զիջվել է 118.891.720 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալի հիման վրա հայցվոր կողմը հայտնել է, որ հրաժարվում է ներկայացված հայցից եւ խնդրել է հայցից հրաժարվելու հիմքով, քաղաքացիական գործի վարույթը կարճել: Պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

3. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Այսպիսով, դատարանը ուսումնասիրելով ներկայացված դիմումը, գնահատելով քաղաքացիական գործի հանգամանքները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական

